

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝

30.05.2022 թ. կայացած նիստի

թիվ 10 արձանագրություն

Օրկարգ

1. Ֆակուլտետի մեթոդխորհրդի 2021-2022թ.թ.ուս. տարում կատարած աշխատանքների ամփոփում:
 2. Բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում:
 3. Ուսանողների արտադրական և մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում:
 4. Առկա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան ատեստացիա:
 5. Ընթացիկ հարցեր:
1. Մեթոդխորհրդի նախագահ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ն. Հարությունյանը ներկայացրեց հաշվետվությունը: Նա նշեց, որ 2021-2022 ուսումնական տարում անց է կացվել մեթոդխորհրդի 9 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են՝ ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսուցման որակի ապահովման ու բարձրացման հետ կապված մի շարք հարցեր:
- Մեթոդական խորհրդի կազմի վերահաստատման հարցը:
 - ԵՊՀ-ի «ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԿԱՐԳ» -ի բովանդակության մեջ փոփոխություններ կատարելու հարցը: Նիստի ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել որոշ կարևոր կետերի և դրանց վերաբերյալ արվել են առաջարկներ:
 - Ֆակուլտետում իրականացվող մասնագիտությունների, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի վերանայման և վերահաստատման հարցը. մասնավորապես՝
 - 1/ Անգլիական բանասիրության ամբիոնի նոր մագիստրատուրական կրթական ծրագրի՝ «Հրատարակչական գործ և խմբագրական աշխատանք (անգլերեն և հայերեն)» ներդրման հարցի քննարկումը:
 - 2/ Անգլիական բանասիրության ամբիոնի՝ «Կիրառական լեզվաբանություն» մագիստրատուրական կրթական ծրագրում փոփոխություններ կատարելու հարցը,
 - 3/ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի բակալավրի ուսումնական ծրագրի՝ երկու գործող մասնագտական ծրագրերին կից, ևս մեկ ծրագիր ստեղծելու առաջարկը:
 - 4/ Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի նոր մագիստրատուրական կրթական ծրագրի՝ «Հաղորդակցություն և միջմշակութային հետազոտություններ (անգլերեն և հայերեն)» ներդրման հարցի քննարկումը:

5/ Ռոմանական բանասիրության ամբիոնի «Միջմշակութային հաղորդակցություն» (իսպաներեն) և «Միջմշակութային հաղորդակցություն» (իտալերեն) մագիստրոսական կրթական ծրագրերում՝ «Արդի լեզվաբանական ուղղություններ և դպրոցներ» առարկայի փոխարեն, «Թարգմանության պատմություն և տեսություն» առարկան ներմուծելու հարցը:

6/ Ֆրանսիական բանասիրության ամբիոնի «Միջմշակութային հաղորդակցություն» (ֆրանսերեն) մագիստրոսական կրթական ծրագրում՝ «Արդի լեզվաբանական ուղղություններ և դպրոցներ» առարկայի փոխարեն, «Թարգմանության պատմություն և տեսություն» առարկան ներմուծելու հարցը:

7/ Գերմանական բանասիրության ամբիոնի 2022-2024 թթ. ուս. Տարվա՝ «Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն (գերմաներեն)» մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանի մեջ փոփոխություններ մտցնելու հարցը:

8/ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի՝ մագիստրատուրոսական կրթական ծրագրերում կատարված փոփոխությունների հարցի քննարկումը:

9/ Արտասահմանյան գրականության ամբիոնի բակալավրի նոր կրթական ծրագրի՝ «Արտասահմանյան գրականություն և ստեղծագործական վարպետություն» ներդրման հարցի քննարկումը:

10/ Միջանկյալ քննությունների գնահատման չափանիշների վերանայման հարցը:

- դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մեթոդական ձեռնարկների ու դրանց գրախոսության քննարկման հարցը. 2021-2022 ուս. տարվա ընթացքում մեթոդիսորհրդի կողմից տպագրության են երաշխավորվել ֆակուլտետի դասախոսների կողմից կազմված 9 ուսումնական ձեռնարկ և 1 ուսումնաօժանդակ ձեռնարկ:
- Մուղլ ծրագրում յուրաքանչյուր ամբիոնի դասընթացների պլանների պատրաստման և, Ուսումնամեթոդական Վարչություն՝ արխիվացնելու նպատակով ուղարկման գործընթացի ղեկավարումը/հսկումը:
- Ինչպես յուրաքանչյուր տարի, այս ուսումնական տարվա հունիսին ևս, սկսվում է կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցի և դասընթացների տեղեկագրքի էլեկտրոնային տարբերակի վերանայումը: Սակայն այս տարի մեր ծրագրերի մասնագիրները և դասընթացների նկարագրիչները պետք է նորացվեն Բակալավրի կրթական ծրագրի և բովանդակության նոր պահանջներին համապատասխան և ներկայացվեն ԵՊՀ Որակի ապահովման կենտրոն: Ըստ այդմ, Ն.Հարությունյանը խնդրեց ամբիոններին համագործակցել այս գործում:

2.Գ.Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների

պաշտպանության արդյունքների ամփոփմանը: Նա նշեց, որ ընդհանուր առմամբ ավարտական աշխատանքների պաշտպանության ընթացքն ու արդյունքները գոհացուցիչ են և ներկայացրեց ինը ամբիոնների աշխատանքների արդյունքների քանակը և գնահատականները: Գ.Բարսեղյանը մի մտահոգություն հայտնեց այդ առումով՝ խնդրելով և հորդորելով ամբիոնների վարիչներին, որ նրանք ավելի ուշադիր լինեն չորրորդ կուրսի ուսանողների գնահատականներին: Նա հավելեց, որ նկատվել են դեպքեր, երբ գնահատականները եղել են մի փոքր ուռճացված:

3.Գ.Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի երրորդ հարցին՝ ուսանողների արտադրական և մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփմանը: Նա խոսքը փոխանցեց փոխդեկան Ն.Մադոյանին, ով խոսելով ուսանողների արտադրական և մանկավարժական պրակտիկայի արդյունքների մասին նշեց, որ այն անցել է բնականոն ձևով, առանց ավելորդ բարդությունների:

4.Գ.Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի չորրորդ հարցին՝ առկա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան ատեստացիային: Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Ս.Գասպարյանը, արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոցենտ Ա.Սեդրակյանը ներկայացրեցին իրենց ամբիոններում առկա ուսուցմամբ ասպիրանտների կատարած աշխատանքները:

Միաձայն քվեարկության արդյունքում որոշեցին

- 1.Երաշխավորել արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, Բ.Գ.Թ., դոցենտ Անուշ Ռոստոմի Սեդրակյանին պրոֆեսորի կոչման ներկայացնելու համար: 2. Դիմել ԵՊՀ գիտխորհրդին Բ.Գ.Թ., դոցենտ Անուշ Ռոստոմի Սեդրակյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն
- Հաշվի առնելով թեմայի արդիականությունը, տեսական և գործնական կարևորությունը՝ հաստատել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի Միրիջանյանի՝ «Իրաբանական փաստաթղթերի թարգմանության խնդիրը գործառական հաղորդակցական լույսի ներքո» թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Դ., պրոֆեսոր Գ.Հ. Մուրադյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի առկա ասպիրանտ Ռաֆայել Հարությունյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հաշվի առնելով թեմայի արդիականությունը, տեսական և գործնական կարևորությունը՝ հաստատել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Միլենա Ավետիսյանի՝ «Բույսերի և կենդանիների անուններով ոճական

հնարները Ջերալդ Դարելի ստեղծագործություններում (խտալերենի զուգադրությամբ)» թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Դ. պրոֆեսոր Ս.Ք. Գասպարյանին:

- Հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի առկա ասպիրանտ Հայկ Դանիելյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի առկա ասպիրանտ Հովհաննես Վանեսյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Երաշխավորել արտասահմանյան գրականության ամբիոնի „Արտասահմանյան գրականություն,, մասնագիտության մագիստրատուրայի „Էկզիստենցիալիզմը ֆրանսիական գրականության մեջ,, և „Գրականության նշանագիտություն,, առարկաները դարձնելու հետազոտական բաղադրիչով առարկաներ: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ, մ.գ.թ. Գայանե Դանիելյանին դոցենտի գիտական կոչման գործընթացին երաշխավորելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հաստատել Ռ. Բաղդամյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Գործարար բանակցությունների լեզվագործաբանական կաղապարը (Հարվարդի բանակցային նախագիծ)» վերնագրով (թվանիշ՝ Ժ.02.07): Գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Դ., պրոֆեսոր Լ. Հարությունյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հաստատել Քրիստինա Թորգոմյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Անգլերենի համակցված ուսուցման մեթոդական համակարգը ոչ լեզվական բուհում» վերնագրով (թվանիշ՝ Ժ.02.07): Գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Թ., դոցենտ Ս. Չալաբյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:
- ԵԼՀ ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ղեկավարների հարցի լուծման համար դիմել ուսումնական-ակադեմիական գծով պրոռեկտոր՝ Է.Ասրյանին:

ԵԼՀ ֆակուլտետի
ղեկան և գիտխորհրդի նախագահ,

Բ.Գ.Թ., դոցենտ՝

Գիտխորհրդի քարտուղար, Բ.Գ.Թ., դոցենտ՝

Գ.Բադալյան

Ս.Դալայան

30.05.2022